

Newsletter

Delegation of the European Union to Armenia

September/October #4

Focus On/Խոչոր պլան

Deep and Comprehensive Free Trade Agreement A new perspective for the Armenian economy

As part of the future EU-Armenia Association Agreement, the creation of a deep and comprehensive free trade area will open the European market to Armenia and will promote foreign investment. Before negotiations on the agreement can start, Armenia is supposed to meet relevant conditions. Currently, Armenia is on the path of implementation of reforms and the EU is assisting those through different types of technical support, as well input provided by the EU Advisory Group. The Head of the EU Delegation to Armenia, Raul de Luzenberger and Armenian Minister of Economy, Nerses Yeritsyan shared thoughts on the preparatory work of the free trade agreement and its potential benefits for Armenians.



H.E. Raul de Luzenberger
Head of the EU Delegation to Armenia

- What visible changes will the DCFTA bring to a common resident of Armenia?

- It will be an important modernisation of the Armenian administrative and legislative framework and will result in a modernisation of the Armenian economy. This will cover different aspects: the consumers will receive better protection, will purchase consumer goods knowing that the quality and the standards are higher, and the innovations that Armenia produces will be better protected. At the same time, the innovations of other countries will be better protected in Armenia. Armenia will have a more open market with access to more sophisticated markets like the EU internal market. This will allow Armenia to become more attractive for foreign investments.

- What is the role of the European Commission on the path towards a DCFTA agreement?

- The European Commission is the key negotiator on the European side. At the same time the EC has an important assistance budget for Armenia that will be now designed to reach the goal of signing an Association Agreement with the EU. Part of the Association Agreement will be the signature of a DCFTA. The EC is not the only EU donor present in Armenia, our Member States will also contribute to this agreement.

- What is the current stage of the preparatory work for the agreement?

- We are well advanced on preparing negotiations.

The European Commission sent a mission here last year, which drafted a comprehensive list of measures that are necessary for Armenia to be prepared to negotiate this ambitious agreement and then to implement it. We have worked together with the Ministry of Economy and the authorities of the Republic of Armenia to ensure that these measures are complete.

- ԽՅԱԱ-ի ստեղծումը Հայաստանի շարքային քաղաքացիների համար ի՞նչ տեսանելի փոփոխությունների կհանգեցնի:

- Այն կարևոր նորություն կլինի Հայաստանի վարչական և օրենսդրական բնագավառներում և կհանգեցնի Հայաստանի տնտեսության արդիականացմանը: Այն կներառի տարբեր ոլորտներ. առևտրի ընթացքում սպառողներն ավելի պաշտպանված կլինեն, կտեղեկանան ապրանքի որակին և չափանիշներին: Հայաստանի կողմից առաջարկվող նորարարությունները կլինեն առավել պաշտպանված: Դրա հետ մեկտեղ, այլ երկրների նորարարությունները կլինեն առավել պաշտպանված Հայաստանում: Հայաստանը կունենա ավելի բաց շուկա՝ այլ առաջադեմ շուկաներ մուտք գործելու հնարավորությամբ, ինչպիսին օրինակ ԵՄ ներքին շուկան է, որն ամենամեծն է աշխարհում: Այս ամենը Հայաստանին թույլ կտա դառնալու ավելի գրավիչ օտարերկրյա ներդրումների համար:

- Ո՞րն է Եվրոպական հանձնաժողովի դերը ԽՅԱԱ-ի համաձայնագրի կնքման ճանապարհին:

- ԵՅ-ն եվրոպական կողմի հիմնական բանակցողն է: Դրա հետ մեկտեղ՝ ԵՅ-ն օժանդակության նշանակալից բյուջե է նախատեսել Հայաստանի համար, որը պետք է ծառայեցվի ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի բարեհաջող ստորագրման նպատակի համար: ԽՅԱԱ-ի համաձայնագրի ստորագրումը կդառնա Ասոցացման համաձայնագրի մի մասը: ԵՅ-ն Հայաստանում ներկա ԵՄ միակ դրոնորը չէ, այս համաձայնագրում իրենց ներդրումը կունենան նաև անդամ-պետությունները:

- Ներկայումս ո՞ր փուլում են համաձայնագրի նախապատրաստական աշխատանքները:

- Բանակցությունների նախապատրաստման հարցում մեծ հաջողություններ ունենք: Եվրոպական հանձնաժողովը անցյալ տարի ներկայացրել է ուղարկել այստեղ, որը կազմել է այս խոստումնալից համաձայնագիրը կնքելու և իրագործելու Հայաստանի համար անհրաժեշտ քայլերի համապարփակ մի ցանկ: Մենք Էկոնոմիկայի նախարարության և ՀՀ իշխանությունների հետ աշխատել ենք շատ կարևոր հարցերի շուրջ, որպեսզի վստահ լինենք, որ այս միջոցառումները լիարժեք են:

Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր Նոր հնարավորություններ Հայաստանի տնտեսության համար

Որպես ապագա Ասոցացման համաձայնագրի բաղկացուցիչ մաս, խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՅԱԱ) ստեղծումը կբացի եվրոպական շուկան Հայաստանի համար և կխրախուսի օտարերկրյա ներդրումները Հայաստանում: Նախքան Ազատ առևտրի համաձայնագրի բանակցային գործընթացի մեկնարկը՝ Հայաստանից պահանջվում է համապատասխան պայմանների բավարարում: Ներկայումս Հայաստանն աշխատում է այդ բարեփոխումների իրականացման ուղղությամբ, որին ԵՄ-ն նշանակալից աջակցություն է ցուցաբերում տեխնիկական աջակցության ծրագրերի և ԵՄ խորհրդատվական խմբի կողմից տրամադրվող օժանդակության միջոցով:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուզենբերգերը և ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը հայտնել են իրենց կարծիքները Ազատ առևտրի գոտու ստեղծման նախապատրաստական աշխատանքների ընթացքի և ակնկալվող արդյունքների մասին:

- What influence can this agreement have on the entrepreneurship area in Armenia?

- A DCFTA will provide an opportunity to create new export markets and develop our skills in selling our goods to a more sophisticated consumer. It will ensure secure consumer goods, since we have to meet certain standards within the scope of the agreement. It means that our consumer will be able to pay for the services and goods of the same quality just as in foreign markets.

- Currently, at what stage is the preparatory work of the agreement?

- There is a visible progress in respect to free trade agreement preconditions (eradication of technical complications, developing negotiation skills, legislative approximation of the EU laws and standards relating to trade, etc.). We expect to register serious achievements by the first half of the coming year and to develop necessary skills together with the EU Advisory Group to start the discussions which the Europeans will consider sufficient for starting with us the negotiation process.

- Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ սույն համաձայնագրի կնքումը հայաստանյան գործարարության ոլորտի վրա:

- ԽՅԱԱ-ն արտահանման հետ կապված նոր շուկաների հնարավորություն կտա, կզարգանան ավելի պահանջվող սպառողներ մեր ապրանքը վաճառելու հնարավորությունները: Այն անվտանգ սպառողական ապրանքներ կապահովի, քանի որ համաձայնագրի շրջանակներում որոշակի ստանդարտներ պետք է ապահովվեն: Դա նշանակում է, որ մեր սպառողը կկարողանա ձեռք բերել նույն որակի ծառայություններ և ապրանքներ, ինչպես արտաքին շուկաներում:

- Ի՞նչ փուլում են համաձայնագրի նախապատրաստական աշխատանքները:

- Ազատ առևտրի համաձայնագրի նախապայմանների մասով (բանակցային կարողությունների ձևավորում, առևտրին առնչվող ԵՄ օրենքների ու ստանդարտների օրենսդրական համապատասխանեցում և այլն) բավականին առաջընթաց կա: Ակնկալում ենք մինչև 2011 թ.-ի առաջին կեսը լուրջ հաջողությունների հասնել և ԵՄ խորհրդատվական խմբի հետ միասին անհրաժեշտ կարողություններ զարգացնել՝ այդ քննարկումները սկսելու համար, ինչը եվրոպացիները բավարար կհամարեն մեզ հետ բանակցային գործընթացը սկսելու համար:



Mr. Nerses Yeritsyan
Minister of Economy of Armenia

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Սեպտեմբեր/հոկտեմբեր #4

Trans-boundary river management



On 1 October the EU project "Trans-boundary river management Phase II for the Kura river basin – Armenia, Georgia, Azerbaijan" presented a draft for the Aghstev river basin management in Ijevan. The management plan for the Aghstev river is a pilot project that can have an essential impact on reducing river pollution. "The EU aims at facilitating our research on the Aghstev river, a part of the Kura river basin, its problems and their further solutions", said Aram Gevorgyan, the EU Kura river Project Data Management Specialist. Jesper Ansbaek, an international expert, spoke about the usage of the EU Water Framework Directive methodology and stressed the importance of solving pollution issues in the Aghstev river basin. The pilot project also comprised evaluation data from monitoring and water body delineation.

The Kura river basin project started in June 2008 and will last for 42 months. It aims at reducing the pollution of the Kura river basin via trans-boundary cooperation and water resources management. It also aims at joint monitoring and data exchange between the three participating countries, an educational tour to the EU for the staff of beneficiary departments as well as development of guidelines for ensuring social involvement in the process. The project key partners are the Water Resources Management Agency of the Ministry of Nature Protection of Armenia and the Environmental Impact Monitoring Center.

Անդրսահմանային գետերի կառավարում



Հոկտեմբերի 1-ին «Անդրսահմանային գետերի կառավարում, երկրորդ փուլ, Քուռ գետ՝ Հայաստան, Վրաստան և Ադրբեջան» եւ ծրագիրը հիշանալի քաղաքում ներկայացրել է Աղստևի գետավազանի կառավարման նախագիծը: Վերջինս փորձնական նախագիծ է, որը կարող է եսական ազդեցություն ունենալ գետերի մաքրման գործում: «ԵՄ-ի նպատակն է օգնել մեզ ուսումնասիրել և ներկայացնել Քուռի գետավազանի մաս հանդիսացող Աղստև գետի վիճակը, խնդիրները և տալ հարցի լուծման առաջարկներ», - նշել է ԵՄ-ի Քուռ գետի ծրագրի տվյալների կառավարման մասնագետ Արամ Գևորգյանը: Միջազգային փորձագետ Ջեսպեր Անսբաեկը անդադարձել է գեկույցի ԵՄ Զրային շրջանակային հանձնարարականի մեթոդաբանության օգտագործմանը և շեշտել Աղստևի գետավազանի մաքրման կարևորությունը: Ներկայացված փորձնական նախագիծը ներառում է նաև մշտադիտարկման (մոնիտորինգ) արդյունքում ստացված գնահատման տվյալներ և ջրային մարմինների քարտեզագրում:

Նշենք, որ Քուռի գետավազանի ծրագիրը մեկնարկել էր 2008թ. և տևելու է 42 ամիս: Այն ուղղված է Քուռի գետավազանի մաքրմանը՝ անդրսահմանային համագործակցության և ջրային ռեսուրսների կառավարման միջոցով: Ծրագրի նպատակներից է նաև գետերի համատեղ մշտադիտարկումը, ծրագրի մասնակից 3 երկրների միջև տվյալների փոխանակումը, շահառու գերատեսչությունների պատասխանատու աշխատակիցների ուսումնական գործուղումները ԵՄ, ինչպես նաև ուղեցույցների մշակումը՝ գործընթացին հասարակության լայն խավերի մասնակցությունն ապահովելու նպատակով:

Հայաստանում ծրագրի հիմնական գործընկերներն են ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը և շրջակա միջավայրի վրա ներգործության մշտադիտարկման կենտրոնը:

Democracy in practice

"Democracy starts with you!" is an EU funded project, which started in 2009 and aims at breaking down barriers and facilitating genuine civic participation of young people from the South Caucasus. On 18 September, a project-related training of teachers started in Yerevan and continued in Tsaghkadzor. 60 teachers from Armenian schools were trained on carrying out simulation games, modern methods of civic education, political participation, and political representation to be able to inform pupils and their parents. Then democracy simulation games will be prepared in each school. "There is no alternative to democracy: it is the phenomenon, which each person must carry inside. Education is the fundamental concept of democracy", said Armen Ashotyan, the Armenian Minister of Education and Science in his welcoming speech. Pupils and teachers from 20 schools, and youth wings of political parties are involved in the Armenian programme. The 11th grade pupils will take part in three-phase simulation games (national, regional and EU level). "The simulation games will help young people not only understand democracy theoretically, but also use it in practice", said Lea Vuori, Head of Operations at the EU Delegation to Armenia. After the simulation games, the Armenian participants will choose a representative to go on mission to the South Caucasus Youth Parliament and introduce their political agenda. "Democracy Starts with You!" was launched by the German Konrad Adenauer Foundation, the Yerevan School of Political Studies, the Baku School of Political Studies and the Tbilisi School of Political Studies. It is implemented in Armenia, Azerbaijan and Georgia and targets young people from national minorities or rural areas.

Ժողովրդավարությունը գործնականում



ԵՄ կողմից ֆինանսավորվող «Ժողովրդավարությունը սկսվում է քեզանից» ծրագիրը մեկնարկել է 2009թ-ին և նպատակ ունի վերացնելու խոչընդոտները և դյուրացնելու Հարավային Կովկասի երիտասարդների՝ իրական քաղաքացիական հասարակության անդամ դառնալու ճանապարհները: Ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցիչների վերապատրաստումը մեկնարկել է սեպտեմբերի 18-ին Երևանում և շարունակվել Ծաղկաձորում: Հայաստանի դպրոցներից 60 ուսուցիչ ծանոթացել է նմանակման խաղերի անցկացման ձևերին, քաղաքացիական կրթության ժամանակակից մեթոդներին, քաղաքական մասնակցությանը և ներկայացուցչությանը՝ այդ գիտելիքներն աշակերտներին և նրանց ծնողներին փոխանցելու նպատակով: Այնուհետև ժողովրդավարության նմանակման խաղեր կկազմակերպվեն յուրաքանչյուր դպրոցում: «Ժողովրդավարությունը այլընտրանք չունի. դա այն ֆենոմենն է, որ յուրաքանչյուրս իր մեջ պետք է կրի: Կրթությունը ժողովրդավարության մեջ անկյունաքարային նշանակություն ունեցող արժեք է», - իր ողջույնի խոսքում նշել է ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Հայաստանյան ծրագրում ընդգրկվել են թվով 20 դպրոցների աշակերտներ, ուսուցիչներ, կուսակցությունների երիտասարդական թևերի ներկայացուցիչներ: 11-րդ դասարանների աշակերտները կմասնակցեն նմանակման եռփուլ խաղերին (ազգային, տարածաշրջանային և ԵՄ մակարդակներով): «Նմանակման խաղերը կօգնեն երիտասարդներին ոչ միայն տեսականորեն հասկանալ ժողովրդավարությունը, այլև գործնականում օգտագործել այն», - ասել է ԵՄ հայաստանյան պատվիրակության գործառնությունների բաժնի ղեկավար Լեա Վուրին: Նմանակման խաղերից հետո հայաստանյան մասնակիցները կընտրեն ներկայացուցիչ, որը կգործուղվի Հարավային Կովկասի երիտասարդական խորհրդարան (ՀԿԵԽ)՝ ներկայացնելու քաղաքական օրակարգը: «Ժողովրդավարությունը սկսվում է քեզանից» ծրագիրը մեկնարկել է գերմանական «Կոնրադ Ադենաուեր», հոլանդական «Էդուարդո Ֆրեյ» հիմնադրամների, Երևանի, Բաքվի և Թբիլիսիի քաղաքական դասընթացների դպրոցների կողմից: Այն իրականացվում է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագրի ուշադրության կենտրոնում են ազգային փոքրամասնությունների և գյուղական շրջանների երիտասարդները:

Organic ways to replace pesticides



The film "Pesticides: Are They Really Necessary?" funded by the European Union was presented on 31 August at the UN Office in Armenia. The 12-minute film produced by the "Armenian Women for Health and Healthy Environment" NGO demonstrates environmental and health problems caused by the extensive use of pesticides and calls to develop organic agriculture.

The film portrays how in many cases one can avoid using pesticides for pest control, since "medicaments and green fertilizers" can be easily found in the environment. People must only know their qualities and be able to use them correctly. "We give great importance to the issues, connected with the environment and, in particular, reduction of pesticides in agriculture", said in his welcoming speech Raul de Luzenberger, the Head of the EU Delegation to Armenia and added that Armenian producers who wish to export to the EU should adopt clean production practices. The film was followed by a discussion on ways to develop chemical-free agricultural methods, as well as efforts to promote healthy lifestyles and environmentally friendly attitudes. The participants expressed their concerns about the farm production system in Armenia, which requires a well-operating processing industry, effective marketing and technical assistance.

Օրգանական միջոցները՝ թունաքիմիկատների փոխարեն



ԵՄ ֆինանսավորմամբ նկարահանված «Թունաքիմիկատներ. արդյո՞ք դրանք պարտադիր են» տեսաֆիլմի շնորհանդեսը կայացել է օգոստոսի 31-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում: 12 րոպե տևողությամբ ֆիլմը պատրաստել է «Հայ կանայք հանուն առողջության և շրջակա մաքուր միջավայրի» ՀԿ-ն և ներկայացնում է թունաքիմիկատների ինտենսիվ օգտագործման հետևանքով առաջացած բնապահպանական և առողջական լուրջ խնդիրները կոչ անելով զարգացնել օրգանական գյուղատնտեսությունը:

Ֆիլմը նկարագրում է, թե ինչպես շատ դեպքերում վնասատուների և հիվանդությունների դեմ կարելի է պայքարել առանց թունների, քանի որ «դեղորայքն ու կանաչ պարարտանյութերն աճում են մեր ոտքերի տակ»: Մարդիկ միայն պետք է իմանան դրանց հատկությունները և կարողանան դրանք ճիշտ օգտագործել: «Մենք մեծ կարևորություն ենք տալիս շրջակա միջավայրում՝ մասնավորապես գյուղատնտեսությունում թունաքիմիկատների օգտագործումը նվազեցնելուն ուղղված ջանքերին», - իր ողջույնի խոսքում նշել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուզենբերգերը և հավելել, որ իրենց արտադրանքը եվրոպական շուկա արտահանել ցանկացող հայ արտադրողները պետք է օգտագործեն մաքուր՝ թունաքիմիկատներից զերծ արտադրության փորձը: Ֆիլմի ցուցադրումից հետո քննարկվել են առանց քիմիկատների գյուղատնտեսական մեթոդների զարգացման եղանակները, ինչպես նաև այն ջանքերը, որոնք պետք է գործադրվեն առողջ ապրելակերպի և շրջակա միջավայրի բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Նրանք արտահայտել են իրենց մտահոգությունները Հայաստանի գյուղատնտեսական համակարգի մասին, որը պահանջում է լավ նախագծված արդյունաբերական գործընթաց, արդյունավետ մարկետինգ և տեխնիկական աջակցություն:

Childhood without fear and violence

The results of an assessment on the child protection situation in Armenia, done within the framework of the EU funded "Unite for Children, Save Futures" project, were presented on 10 September in Yerevan. The goal of the three-year project is to identify, address and prevent child protection problems. The first assessments were conducted in the regions of Tavush, Lori and Gegharkunik during April and May 2010.

"The results showed that violence against children was observed in the three regions, but the present system is not always productive in responding to such cases in time", marked Irina Saghoyan, the Country Director of "Save the Children" in Armenia, which implements the project. She added that violence against children is widespread in Armenian society as an acceptable form of ensuring discipline. The assessment further showed that children from all marzes experience violence in different settings: at home, in institutions, schools and even on the streets. The most common forms of violence against children are domestic physical and psychological abuse.

Most people understand physical violence against children, but parents are often unaware that exploiting children economically through forced work is a violation of children's rights as well. Difficult economic and social conditions in families, increase of divorces, alcohol and drug addiction were mentioned as motivations for violence. Children with special needs proved to be particularly vulnerable to violent incidents, because families are inclined to hide those children from society. According to the experts, social indifference and the idea that a child belongs to his/her parents, in addition to lack of awareness may also lead to violence. The assessment showed that most children and parents do not know how to report a case of abuse or which relevant services are available.

Save the Children Armenia has a hotline for violence against children, 0800-61-111, which already operates in Armenia. Departments on protection of children's rights also function in the municipality of Yerevan and all regional administrations. Experts suggest, however, stronger cooperation among agencies responsible for child and family welfare in the regions.

The assessment was done in the framework of a project funded by the European Union and the Open Society Institute. The next phase of the project foresees efforts to raise awareness regarding child protection with the help of mass media, as well as practical training of teachers and parents.

Մանկություն՝ առանց վախի և բռնության

«Միավորվենք հանուն երեխաների, փրկենք ապագան» ծրագրի շրջանակներում անցկացված երեխաների պաշտպանության իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները հրապարակվել են Երևանում սեպտեմբերի 10-ին: Եռամյա ծրագրի նպատակն է բացահայտել, արձագանքել և կանխել երեխաների նկատմամբ բռնությունը: Ուսումնասիրություններն անց են կացվել Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում ապրիլ և մայիս ամիսների ընթացքում:

«Արդյունքները ցույց են տվել, որ երեք մարզերում էլ երեխաների նկատմամբ բռնության դեպքեր են դիտարկվել, սակայն ներկայիս համակարգը ոչ միշտ է արդյունավետ՝ խնդրին ժամանակին արձագանքելու համար»,- նշել է ծրագիրն իրականացնող «Պաշտպանենք երեխաներին» (Save the Children) կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն Իրինա Սաղոյանը: Նա ավելացրել է, որ հայ հասարակության մեջ երեխաների նկատմամբ բռնությունը լայն տարածում ունի որպես ընդունված պատժամիջոց: Հարցումներով պարզվել է, որ այս մարզերի երեխաները բռնության են ենթարկվում տարբեր վայրերում՝ տանը, դպրոցում և անգամ փողոցում: Երեխաների նկատմամբ բռնության ամենատարածված ձևը ֆիզիկական և հոգեբանական բռնությունն է ընտանիքում:

Մեծամասնությունը բացասական է համարում երեխաների նկատմամբ միայն ֆիզիկական բռնությունը, մինչդեռ շատ դեպքերում ծնողներն անտեսյակ են, որ երեխաների շահագործումը տնտեսական տեսակետից, օրինակ՝ նրանց աշխատել ստիպելը, նույնպես երեխաների իրավունքների խախտում է: Որպես բռնության դրդապատճառներ նշվել են ընտանիքների տնտեսական և սոցիալական ծանր իրավիճակը, ամուսնալուծությունների աճը, թմրամոլությունը և հարբեցողությունը: Հատկապես խոցելի են հատուկ կարիքներով երեխաները, քանի որ ընտանիքներն այս երեխաներին հասարակությունից թաքցնելու հակում ունեն: Ըստ ոլորտի մասնագետների՝ բռնության կարող են հանգեցնել նաև հասարակության անտարբերությունը, և այն գաղափարը, թե երեխան ծնողների սեփականությունն է, ինչպես նաև՝ իրազեկվածության պակասը: Հարցումներով պարզվել է, որ երեխաների և ծնողների մեծամասնությունը տեսյակ չէ, թե ում կարող է դիմել բռնության դեպքի մասին հայտ ներկայացնելու համար կամ ինչ համապատասխան ծառայություններ կան ընդհանրապես:

«Պաշտպանենք երեխաներին» կազմակերպության հայաստանյան գրասենյակն ունի Հայաստանում գործող թեժ գիծ՝ 0800 61 111 հեռախոսահամարով: Բացի այդ՝ Երևանի քաղաքապետարանում և Հայաստանի բոլոր մարզապետարաններում գործում են երեխայի իրավունքների պաշտպանության բաժիններ: Այնուամենայնիվ, մասնագետները կարևորում են երեխաների և ընտանեկան բարեկեցության հարցերով զբաղվող գործակալությունների միջև ավելի սերտ համագործակցության ձևավորումը:

Հարցումներն անց են կացվել Եվրոպական միության և Բաց հասարակության ինստիտուտի կողմից համատեղ ֆինանսավորվող նախագծի շրջանակներում: Ծրագրի հաջորդ փուլը նախատեսում է երկխոսություն երեխաների պաշտպանության մասին իրազեկվածության վերաբերյալ՝ ՁԼՄ-ների, ինչպես նաև ուսուցիչների, ծնողների և գործնական դասընթացների միջոցով:



Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Սահմանների բախալի. վիզա

Մարդիկ, երկրներ, սահմաններ: Տարբեր երկրներ մուտք գործելու, սահմաններ անցնելու համար մարդկանց հաճախ անհրաժեշտ է լինում վիզա (հրավեր), որի համար դիմելիս ամենակարևոր բանն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև դրանք պատրաստելու ժամկետներն իմանալն է: Եզրփոխ տեղեկություններ ստանալու համար լավագույն աղբյուրը տվյալ երկրի դեսպանատուն կամ հյուպատոսարան այցելելն է: Վիզա ստանալ ցանկացողները կարող են զանգահարել, այցելել կամ տեղեկատվություն փնտրել՝ նշված հաստատությունների պաշտոնական կայքէջերի միջոցով: Յուրաքանչյուր երկիր ինքն է սահմանում իր վիզաների ձեռքբերման կարգը, բայց կան նաև բազմակողմանի համաձայնագրեր, ինչպիսին օրինակ Շենգենյան համաձայնագիրն է:

Շենգենյան վիզան շենգենյան գոտի մուտք գործելու և անարգել տեղաշարժելու վիզա է: Այն ԵՄ վիզա չէ: Շենգենյան գոտու ստեղծումը երկու նպատակ է հետապնդում. վերացնել ներքին սահմանները շենգենյան երկրների միջև և համախմբել ուժերը՝ միջազգային կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարելու համար:

Շենգենյան գոտու մեջ են մտնում Շենգենյան համաձայնագիրը ստորագրած երկրները: Այդ երկրներն են՝ Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իսլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Գոնաստան, Գոնգարիա, Մալթա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Չեխիա, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա և Ֆրանսիա:

Նշում. բացառությամբ Նորվեգիայի և Իսլանդիայի, շենգենյան բոլոր երկրները ԵՄ անդամ-պետություններ են: Այնուամենայնիվ, ԵՄ ոչ բոլոր անդամ-պետություններն են մտնում շենգենյան գոտու մեջ:

Շենգենյան գոտին և շենգենյան համագործակցությունը հիմնադրվել են 1985թ-ին՝ **Շենգենյան համաձայնագրի** ստորագրմամբ: Սահմանազրկ ստորագրող երկրները վերացրել են բոլոր ներքին սահմանները՝ դրանք փոխարինելով մեկ արտաքին սահմանով: Այստեղ ընդհանուր կանոնները և գործընթացները կիրառվում են նաև կարճաժամկետ վիզաների, ապաստանի տրամադրման դիմումների և սահմանների կառավարման դեպքում: Միաժամանակ, շենգենյան գոտում մարդկանց պաշտպանվածությունը երաշխավորելու նպատակով կատարելագործվել է ոստիկանական ծառայության և դատական իշխանության միջև համագործակցությունը և համաձայնեցված գործունեությունը:

Շենգենյան վիզայի տեսակները

Օդանավակայանի տրանզիտ վիզա (վիզայի վրա նշվում է որպես «A» տիպ). այն պահանջվում է երրորդ կարգի երկրների այն քաղաքացիներին, ովքեր թռչում են այլ՝ երրորդ կարգի երկիր, բայց կանգ են առել կամ տեղափոխվում են շենգենյան պետության օդանավակայանում: Տրանզիտ վիզա («B» տիպ). հնարավորություն է տալիս տրանզիտ ճանապարհով տեղափոխվել մեկ կամ մի քանի շենգենյան անդամ-պետությունների տարածքով: Գործողության առավելագույն ժամկետը 5 օր է: Այն իրավունք է տալիս շենգենյան գոտի մուտք գործել մեկ կամ երկու անգամ: Կարճաժամկետ շենգենյան վիզա («C» տիպ). տրվում է այն դեպքերում, երբ մարդիկ մեկնում են շենգենյան գոտու տարածք՝ գնումների, հանգստի, հարազատներին այցելելու կամ պարզապես գործնական նպատակով և այլն: Գործողության ժամկետը՝ 90 օր: Կարող է լինել մեկանգամյա (1 անգամ է թույլատրվում մուտք գործել շենգեն գոտի) կամ բազմակի կիրառման վիզա: Երկարաժամկետ շենգենյան վիզա («D» տիպ). տրվում է համապատասխան երկրի դեսպանատան կողմից՝ հնարավորություն տալով մարդկանց 90 օր բնակվել տվյալ երկրում՝ որոշ հանգամանքներից ելնելով (աշխատանք, ուսում, ամուսնություն և այլն): Վիզայի այս տեսակի կիրառումը ենթադրում է բազմակի մուտքի իրավունք:

Դիմելու համար հարկավոր է՝

- լրացնել և ստորագրել վիզայի դիմումի ձևաթուղթը շենգենյան պետություններն օգտագործում են ստանդարտ ձևաթղթեր,
- ներկայացնել անձնագիր, որի վավերականության ժամկետը լրանում է ավելի ուշ, քան նախատեսված այցելության ավարտը,
- նկարագրել այցելության նպատակն ու հանգամանքները՝ նշելով փոխադրամիջոցի տեսակը,
- ներկայացնել համապատասխան փաստաթուղթ ուղևորության համար բավարար միջոցների առկայության մասին,
- ներկայացնել փաստաթուղթ ուղևորության ապահովագրության մասին:

Նշում. Շենգենյան վիզա ստանալու համար 33 քաղաքացիները պետք է ներկայացնեն այնպիսի անձնագիր, որի գործածության ընդհանուր ժամկետը չի գերազանցում 10 տարին: Բացի այդ, անձնագրում պետք է լինի առնվազն երկու ազատ էջ՝ նախատեսված մուտքի վիզայի համար, ինչպես նաև անձնագիրը պետք է վավերական լինի շենգենյան գոտում նախատեսված ճամփորդության ավարտից հետո առնվազն երեք ամսվա ընթացքում:

- European Parliament
- European Council
- Council of the EU
- European Commission
- Court of Justice of the EU
- European Central Bank
- Court of Auditors

Եվրոպական միության խորհուրդը Եվրոպական միության հիմնական որոշումներ կայացնող կառույցն է: ԵՄ խորհուրդը պատասխանատվություն է կրում որոշումների ընդունման և համակարգման համար. ընդունում է օրենքներ՝ սովորաբար դրանք սահմանելով Եվրոպական խորհրդարանի հետ համատեղ, համակարգում է անդամ-պետությունների տնտեսական ընդլայնված քաղաքականությունը, սահմանում և իրականացնում է ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը՝ ըստ Եվրախորհրդի սահմանած ուղեցույցի, համայնքի և միության անունից կնքում է միջազգային համաձայնագրեր ԵՄ և մեկ կամ մի քանի պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ, համակարգում է անդամ-պետությունների գործողությունները և միջոցներ ձեռնարկում հանցագործություններին վերաբերող ոստիկանական և իրավական համագործակցության ոլորտում: Եվրոպական



միության խորհուրդը և Եվրոպական խորհրդարանը քյուշետային լիազորություններ ստանձնած իշխանության մարմիններ են, որոնք հաստատում են

համայնքի քյուշեն: Եվրոպական միության խորհրդի վեհաժողովին մասնակցում են անդամ-պետությունների նախարարները: Ըստ օրակարգի՝ յուրաքանչյուր երկիր ներկայացվում է կոնկրետ հարցի համար պատասխանատու նախարարի մակարդակով: ԵՄ խորհրդի նախագահն ընտրվում է վեց ամիսը մեկ անգամ՝ յուրաքանչյուր անդամ-պետության կողմից՝ հերթազայության (ռոտացիա) սկզբունքով: Եվրոպական միության խորհրդի գործողությունները կարող են լինել կարգավորումների, հրահանգների, որոշումների, ընդհանուր գործողությունների կամ դիրքորոշումների, հանձնարարականների կամ կարծիքների տեսքով: ԵՄ խորհուրդը կարող է տալ նաև եզրակացություններ, ընդունել հռչակագրեր կամ բանաձևեր: Երբ Եվրոպական միության խորհուրդը հանդես է գալիս որպես օրենսդիր մարմին, առաջարկները հիմնականում ներկայացնում է Եվրոպական հանձնաժողովը:

Պորտուգալիան և Եվրոպայի լավագույն ալիքները

Մինչ Պորտուգալիան զբոսաշրջիկներին գրավում է իր տեսարժան վայրերով, ատլանտյան ծովափին գտնվող Փենիշե քաղաքն իր գիրկն է առնում աշխարհի լավագույն սերֆինգիստներին: Ըստ պոլիտեխնիկական լեզուների՝ սերֆինգն առաջացել է դեռևս հազարամյակներ առաջ. սկզբում՝ որպես ձկնորսության միջոց, իսկ հետո դարձել է հոբբի և սպորտաձև: Դնում Զավայան կղզիների բնակիչները հավատում էին, որ օվկիանոսն ունի դեմք և կարող է զգացնումներ ու հույզեր արտաբերել: Նույնիսկ հազարամյակներ անց մարդիկ շարունակում են սահել ալիքների վրայով և փնտրել իրենց արտացոլանքը ջրի վրա: Իր թերակղզային դիրքի շնորհիվ Փենիշեի ծովափը ձգվում է հյուսիսից հարավ, և անկախ քամու ուղղությունից՝ այստեղ մշտապես խողովակաձև ալիքներ են գոյանում: Իսկ շնորհիվ իր հանրահայտ՝ սու-

պերտուբոս (Supertubos) ալիքի՝ Փենիշեն քարտեզների վրա նշվում է որպես սերֆինգի լավագույն տեղանքներից մեկն աշխարհում: 2009 թվականից Պորտուգալիայի սերֆինգիստների ասոցիացիան անցկացնում է այս սպորտաձևի ամենամյա առաջնություն: Փենիշեից ոչ շատ հեռու է գտնվում սերֆինգի տախտակների արտադրամասը: Եթե նույնիսկ չէք պատրաստվում մոր տախտակ գնել, չարժե հրաժարվել արտադրամաս այցելելու հնարավորությունից. այստեղ կձանձրանաք տախտակների պատրաստման եղանակներին և կհասկանաք, թե ինչու են դրանք այդքան թեթև: Պորտուգալիայի ծովագետը հիանալի վայր է նաև այս սպորտաձևում առաջին քայլերն անելու համար: Բազմաթիվ դպրոցներ առաջարկում են դասընթացներ սկսանակների ու պրոֆեսիոնալների համար, նրանց համար, ովքեր երագուն են ալիքներ որսալ:



Լրիվ անվանումը՝ Պորտուգալիայի Զանրապետություն: Մայրաքաղաքը՝ Լիսաբոն: Պետական կառուցվածքը՝ սահմանադրական միապետություն: Տարածքը՝ 92,072 քառ. կմ: Բնակչությունը՝ շուրջ 10,6 մլն մարդ: Պետական լեզուն՝ պորտուգալերեն: Կրոնը՝ բնակչության գերիշխող մասը քրիստոնյա է: ԵՄ անդամակցությունը՝ 1986 թվականից:

Իսպանիա. արևային էներգիայի առաջատար

Իսպանիան ներկայումս աշխարհում ութերորդն է իր տնտեսական ներուժով, իսկ ԵՄ-ում տնտեսապես ամենաարագ զարգացող պետությունն է: Բացի այդ՝ Իսպանիան արեգակնային էներգիա օգտագործող աշխարհի ամենախոշոր պետությունն է: Իսպանիան առաջին երկիրն է, որն ունի առևտրային արեգակնային էլեկտրակայան: Սևիլիայից ոչ հեռու գտնվող Սոլուկար կոչվող հարթակի վրա տեղակայված PS10 էլեկտրակայանի բացումը տեղի է ունեցել 2007 թվականի մարտին: Վերջինս բաղկացած է 624 խոշոր հայելիներից, որոնք տեղադրված են 115 մետր բարձրություն ունեցող աշտարակի շուրջ: Աշտարակը կլանում է հայելիներից առաջացած ինտենսիվ ջերմությունը և փոխանցում այն գոլորշով աշխատող շարժիչին: 35 միլիոն եվրո արժողությամբ այս էլեկտրակայանը կառուցվել է 4 տարվա ընթացքում: Նույն հիմնահարթակի մոտ տեղակայված մոտ՝ PS20 կայանի աշտարակն առանձնանում է իր տեխնոլոգիական առավելություններով,

ինչպիսիք են՝ վերահսկման ու շահագործման ավելի առաջավոր և ջերմային էներգիայի պահեստավորման բարելավված համակարգերը: PS20-ի արտադրած մաքուր էներգիան բավարար կլինի 10000 բնակարան հոսանքով ապահովելու համար՝ այդպիսով կանխելով մոտ 12000 տոննա CO2-ի արտամետումը մթնոլորտ: Փաստորեն Սոլուկար հարթակը ներկայումս իր մեջ ներառում է վեց էլեկտրակայան, որոնք ամբողջությամբ շահագործման կհանձնվեն մինչև 2010թ.-ի վերջը, և բոլոր կայանները միասին կարտադրեն բավարար էներգիա՝ շուրջ 153000 տնային տնտեսություն հոսանքով ապահովելու համար: Այս արեգակնային էլեկտրակայանը կկանխի տարեկան մոտ 185000 տոննա ածխաթուր ցածր արտամետումը մթնոլորտ: Վերականգնողական էներգետիկայի զարգացումն անկասկած հանգեցնում է ԵՄ անդամ-պետությունների՝ էլեկտրաէներգիայի ներկրումների կրճատմանը և կարևոր դեր է խաղում կլիմայի փոփոխության դեմ պայքարում:



Լրիվ անվանումը՝ Իսպանիայի Թագավորություն: Մայրաքաղաքը՝ Մադրիդ: Պետական կառուցվածքը՝ պառլամենտական ժողովրդավարություն և սահմանադրական միապետություն: Տարածքը՝ 504,782 քառ. կմ: Բնակչությունը՝ շուրջ 45,8 մլն մարդ: Պետական լեզուն՝ իսպաներեն: Կրոնը՝ բնակչության 73 %-ը կաթոլիկ է: ԵՄ անդամակցությունը՝ 1986 թվականից:

Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտին ազատ առևտրի գոտու կատարելագործված տարբերակն է՝ նախատեսված ինչպես ապրանքների առքուվաճառքի, այնպես էլ ծառայությունների և ներդրումների հնարավոր լիարժեք ազատականացման համար, ինչպես նաև տեխնիկական չափորոշիչների, սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցների, մտավոր սեփականության պաշտպանության, պետական մատակարարման, մրցակցության, մաքսային վարչության, էներգիային վերաբերող հիմնահարցերի լայնածավալ համապատասխանեցումն է ԵՄ օրենսդրությանը:

Անդրսահմանային համագործակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի (ԵԶԶԳ) բաղկացուցիչ մասն է, որը ֆինանսավորում է համատեղ ծրագրեր՝ մերձեցնելով ԵՄ անդամ-պետությունների տարածաշրջանները և ընդհանուր սահման ունեցող գործընկեր պետությունները: Այն գործ ունի հիմնական մարտահրավերների հետ, որոնցից է սահմանների արտաքին անվտանգությունը և սատարում է տեղական համագործակցությանը: Մշակվել է երկու կարգի ծրագիր. երկկողմանի, որը վերաբերում է ընդհանուր ցամաքային սահմանին (կամ կարճ ծովային հատմանը), և բազմակողմանի՝ որը վերաբերում է ծովի ավազանին (Չայաստանը մասնակցում է Սև ծովի ավազանի ծրագրին):

Տեխնիկական աջակցությունը և տեղեկատվության փոխանակումը ԵԶԶԳ մեկ այլ գործիք է, որն առաջարկում է նպատակային քաղաքականություն և իրավական խորհրդատվություն՝ ԵՄ օրենսդրությանը անդամ-պետությունների օրենսդրությունների համապատասխանեցման նպատակով, ինչը, որպես կանոն, իրականացվում է ԵՄ անդամ-պետությունից բարեփոխումների հատուկ առաջադրանքով գործընկեր պետության որևէ նախարարության կամ տեղի կառավարությանը օգնելու համար փորձագետ գործուղելու միջոցով:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Republic of Armenia (entrance from Proshyan str.)
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia
 The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Չայաստանում
 Չայաստանի Զանրապետություն, Երևան, Ֆրիկի փողոց 21, (մուտքը՝ Պրոշյանի փողոցից)
 Գեմ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, Էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia
 Հարցերի համար պատրաստել է ՇԱՐՄ Գրուպինգը